ՀՀԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործում

Ուսուցիչ՝..... Կյուրեղյան Վալյա Սամսոնի

Ղեկավար՝ ..... Շողիկ Սարգսյան , մ.գ.թ., դոցենտ

Գյումրի-2023

Թեմայի անվանումը՝ «Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրտսեր դպրոցականի դաստիրակության գործում»

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Ավարտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել դաստիարակության էությունը և բովանդակությունը ընտանիքում և վերլուծել դպրոց-ընտանիք համագործակցության դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4

ԳԼՈՒԽ 1
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. Դաստիարակության գործընթացի բովանդակությունը,էությունը.....6

1.2. Դասի դաստիարակչական նշանակությունը տարրական դպրոցում..... 13

Դաստիարակության գործընթացի կազմակերպման ձևերը տարրական դպրոցում.....19

ԳԼՈՒԽ 2
ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2.1. Ընտանիքի դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում.....22

2.2. Դպրոց-ընտանիք համագործակցության ժամանակակից խնդիրները, միջոցները..... 27

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 31

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցների մանկավարժական կոլեկտիվները իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն սովորողներին գիտելիքներ տալու, այլ բարոյական, մարդասիրական հատկանիշներով օժտված, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների, հասարակությունը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակման մեջ: Այդ առաքելությունը կարելի է իրագործել միայն մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:

Թեմայի արդիականությունը: Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Կրթության և դաստիրակության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները միտված են անհատի՝ 21-րդ դարին համահունչ ձևավորման ու զարգացմանը: Պետք է նշել, որ բոլոր ժամանակներում հաստատուն է անհատի զարգացմանը ուղղված գործընթացներում մանկավարժական ճիշտ մոտեցման ցուցաբերումը ինչը անհրաժեշտ է և՛ դպրոցում, և՛ ընտանիքում, և՛ սոցիալական տարբեր միջավայրերում: Ընտանիքը և դպրոցը եղել և մնում են առաջնային սոցիալականացման դաստիրակչական նշանակություն ունեցող կարևոր խնդիրներ, որոնց համագործակցությունը բացառիկ դեր ունի կրտսեր դպրոցականի դաստիրակության գործում: Համագործակցությունը արդիական է քանզի այն հնարավորություն է տալիս համատեղ քննարկել երեխայի ուսումնաճանաչողական ձեռքբերումները, բացահայտել խոչընդոտները և ստեղծել դաստիարակչական միասնական միջավայր: Խնդիրն արդիական է նաև ընտանիքում, դպրոցական համակարգում տեղի ունեցող փոփոխությունների, դպրոց-ընտանիք համագործակցության հնարավորությունների բացահայտման տեսանկյունից:

Հետազոտության նպատակը: ՈՒսումնասիրել դաստիարակության գործընթացի էությունը և բովանդակությունը ընտանիքում և վերլուծել դպրոց-ընտանիք համագործակցության դերն այդ գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են՝

- ՈՒսումնասիրել և վերլուծել դաստիարակության գործընթացը տարրական դպրոցում:
- ՈՒսումնասիրել ընտանիքի դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործում:
- ՈՒսումնասիրել և ներկայացնել դպրոց-ընտանիք համագործակցության հնարավորությունները կրտսեր դպրոցականի դաստիարակության գործում:
- Իրականացնել փորձարարական աշխատանքներ հիմնախնդիրների վերաբերյալ, վերլուծել դրանց արդյունքները:

Աշխատանքի կառուցվածքը: Ավարտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից համապատասխան ենթաբաժիններով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է խնդրի կարևորությունը, թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքերը: Աշխատանքը բաղկացած է 40 էջից:

ԳԼՈՒԽ 1

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

1.1 Դաստիարակության գործընթացի բովանդակությունը և էությունը

Դաստիարակության գործընթացի ճիշտ ու լրիվ իրականացումը ենթադրում է ունենալ դաստիարակության հստակեցված բովանդակություն:

Արդի ժամանակաշրջանում աշխարհի շատ երկրներում դաստիարակության բովանդակությունը ներառում է անձի համակողմանի զարգացումը, աշխարհայացքի ձևավորումը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական զարգացման գործընթացները, աշակերտական կոլեկտիվների գործունեությունը, արտադասարանային, արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների համակարգը:

Դաստիարակության բովանդակության համակարգի մեջ կարելի է ընդգծել տվյալ ազգի, ժողովրդի ավանդույթների, սովորույթների, նաև կրոնաբարոյական դաստիարակությունը:

Դաստիարակության բովանդակությունն ընդգրկում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, անձի որակական գծերը, վարքի կայուն սովորույթները և այլն:

Դաստիարակության բովանդակությունը ներառում է կոլեկտիվիստի, քաղաքացու, ապագա ընտանիքի ղեկավարի, անձի գործնականության, նախաձեռնողականության, գործարարության ձևավորումը և այլն:

Այդ ամենը (ինչ նշվեց վերը) կարելի է իրագործել այն դեպքում, եթե դաստիարակության ամբողջական գործընթացն իրականացվի օբյեկտիվության սկզբունքով, եթե դաստիարակության տեսության և պրակտիկայի մեջ բացառվեն ոչ ճիշտ, ոչ օբյեկտիվ վերլուծությունները, երբ վերլուծության փոխարեն, դաստիարակության գործընթացում կիշխի սինթեզը:

Դաստիարակություն որոշակի տեխնոլոգիաների համակարգ է, որն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը։ Հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար։

Դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի և դպրոցի համատեղ գործունեության ընթացքում, նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններում, հիմնարկություններում, մանկական, երիտասարդական, հասարակական կազմակերպություններում։

Դաստիարակությունը հասարակական կյանքի համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է։ Սերտորեն կապված է ուսուցման հետ։ Դաստիարակության հիմնական եղանակներն են՝ ընտանեկան և հասարակական։

Բովանդակությունը, մեթոդներն ու ձևերը պատմականորեն պայմանավորված են հասարակարգի առջև ծառացած խնդիրներով ն նրա շահերով։ Դաստիարակությունը վերնաշենքային երևույթ է։ Նրա նպատակներն ու խնդիրները որոշվում են հասարակական հարաբերություններով։

Նախնադարյան հասարակարգում դաստիարակության կազմակերպված օջախներ չկային։ Երեխաները, մասնակցելով մեծահասակների աշխատանքներին, ձեռք էին բերում կենսափորձ ն զարգանում ֆիզիկապես։ Դասակարգերի առաջացմամբ դաստիարակությունը ստացավ դասակարգային բնույթ։ Ստրկատիրական հասարակարգում կազմակերպված դաստիրակություն էին ստանում ունևոր ընտանիքի երեխաները։

Սոցիալիստական հեղափոխությունից հետո դաստիարակության նոր բնույթ է ստացել։ Փոխվել են նրա բովանդակությունն ու մեթոդները։ Սոցիալիստական հասարակությունը իր կարևոր խնդիրն է համարում անհատի բազմակողմանի զարգացումը, նրա մտավոր, բարոյական, աշխատանքային, ֆիզիկական և գեղարվեստական դաստիարակություն։ Ուսումնադաստիարակչական հաստատություններից կարևորագույնը դպրոցն է։ Անձի ձևավորման համար կարևոր է հասարակական միջավայրը, գեղարվեստական գրականությունը, թատրոնը, կինոն, հեռուստատեսությունը։ Մանկական ու երիտասարդական կազմակերպությունները

երեխաներին մասնակից են դարձնում հասարակական գործունեությանը, զինում նրանց քաղաքականապես և գաղափարապես[1]:

Ըստ դաստիարակության բովանդակության առանձնացնում են դաստիարակության հետևյալ տեսակները[2]՝

- մտավոր,
- աշխատանքային,
- ֆիզիկական,
- բարոյական,
- հոգեբանաբարոյական,
- գեղագիտական,
- իրավական,
- հայրենասիրական,
- սեռային և սեռական,
- տնտեսագիտական,
- բնապահպանական (հայեցակարգի հեղինակ Յոլկա Յանակիևա),և այլն:

Ինստիտուցիոնալ տեսնակյունից՝

- ընտանեկան,
- կրոնական,
- հասարակական (նեղ իմաստով),
- հակասոցիալական,
- շտկողական (կորեկցիոն):

Դաստիարակության տեսությունն ուսմունք է դաստիարակության երևույթների, փաստերի, դրանց արտաքին ու ներքին կապերի, դաստիարակության սկզբունքների ու մեթոդների, դաստիարակության բովանդակության ու օրինաչափությունների, դաստիարակության կազմակերպման ձևերի մասին:

---

[1] Հակոբյան Գ. Հ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Երևան: Արտագրես, 2011

[2] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%AB%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

Դաստիարակության պրոցեսում աճող սերունդները պետք է յուրացնեն այն, ինչ արդեն կուտակվել է հասարակության կողմից, այսինքն՝ յուրացնեն իրենց զարգացման մակարդակին հասցված գիտելիքները, տիրապետեն որոշակի աշխատանքային կարողությունների, յուրացնեն հասարակության վարքի նորմերն ու փորձը և մշակեն կյանքի մասին հայացքների որոշակի համակարգ:

Դաստիարակությունն ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման պրոցեսն է նրանց կյանքի ու աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Դաստիարակության տեսությունը ներառում է մի շարք տերմիններ (եզրեր), որոնց իմաստի իմացությունը շատ կարևոր է: Այդ տերմիններից են հասկացությունը, դրույթը, կոնցեպցիան, վարկածը, փորձարարությունը, վերլուծությունը, սինթեզը և այլն: Մարդու դաստիարակությունը մանկավարժական լայն իմաստով նպատակաուղղված պրոցես է:

Մանկավարժական գիտության զարգացրած դաստիարակության կոնցեպցիայում քիչ դեր չի հատկացվում մարդու սեփական ակտիվությանը, մարդ, որը դաստիարակության ոչ միայն օբյեկտն է, այլ նաև սուբյեկտը:

Դաստիարակության գործընթացում հսկայական դեր է կատարում դաստիարակի կողմից ներկայացվող պահանջների ընդունումը և գիտակցումը մարդու կողմից, այսինքն՝ դրանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը. վերջինս ստեղծվում է այդ պահանջների խելացիության, արդարացիության, հիմնավորության, դրանց հետևելու ցանկության վերածվելու միջոցով: Հսկայական դեր է խաղում մարդու կողմից կյանքում անձնական նպատակներ դնելը, այդ նպատակների կատարմանը հասնելու ձգտումը, իր մեջ այնպիսի որակների մշակումը, որոնք անհրաժեշտ են դրանց հասնելու համար: Ընդ որում անձի ամենամեծ ակտիվությունը նկատվում է այն ժամանակ, երբ մարդն սկսում է լրջորեն մտածել ինքնադաստիարակության մասին, մշակելով իր ինքնակատարելագործման ծրագիրը, մոբիլիզացնում է իր կամքը և այդ ծրագրի կատարման համար ծախսելով բավականին ջանքեր, ինքն ակտիվորեն ձևավորում իր անձը:

Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների նպատակաուղղված, նպատակասլաց գործունեության ընթացքն է, որի շնորհիվ լուծվում են դաստիարակվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները:

Կարելի է ասել՝ դաստիարակությունը նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ է: Այն մանկավարժական գիտության շատ դժվարին բնագավառներից է, որն ունի մի շարք առանձնահատկություններ[3]:

Առաջին առանձնահատկությունը այն է, որ նրանում հանդես են գալիս <u>օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ:</u> Օբյեկտիվ գործոններն այն պայմաններն են, որոնցում գործում ու ապրում է անձը (դաստիարակվողը), իսկ սուբյեկտիվ գործոնը դաստիարակողի արվեստն է, նրա մանկավարժական վարպետությունը: Մինչև դաստիարակությունը սկսելը դաստիարակողն ինքն իրեն քննում է, թե կարող է արդյոք իրականացնել իր սանի դաստիարակությունն ու ապահովել բարձր արդյունք: Ահա այդ նպատակով յուրացնում է դաստիարակության տեսությունն ու պրակտիկան, հետևում է առաջավոր, հարուստ փորձ ունեցող դաստիարակների գործունեությանը: Լրջորեն ուսումնասիրում է դաստիարակվողի հոգեբանությունը, սոցիալական, քաղաքական, տնտեսական այն պայմանները, որոնցում նա ապրում է: Բացի այդ ամենից, հաշվի է առնում դաստիարակվողի տարիքային ու անհատական առանձնահատկությունները և նոր միայն գործողության մեջ դնում դաստիարակության գործընթացը:

Դաստիրակության երկրորդ առանձնահատկությունը <u>նրա արդյունքի՝ միանգամից չերևացող կողմն է:</u> Դաստիարակության արդյունքը միանգամից չի հայտնվում, ինչպես շատ շուտ երևում կամ հայտնվում է ուսուցման գործընթացի արդյունքը: Աշակերտին բացատրված, պարզաբանված ուսումնական նյութը, երեք օր հետո, նա վերարտադրում է ուսուցչին: Վերջինս լսում, արժեվորում է արդյունքը, մինչդեռ դաստիարակության գործընթացի արդյունքն այդպես արագ չի բացահայտվում:

Դաստիրակության գործընթացի երրորդ առանձնահատկությունը <u>նրա երկարատևությունն է:</u> Պետք է մշտապես իմանալ, որ մարդու դաստիարակությունը մեկ օրվա, մեկ տարվա գործ չէ: Այն երկար ու ձիգ տարիների ներգործությունների,

[3] http://www.usum.org/load/49-1-0-736

ազդեցությունների, դաստիարակի տքնաջան աշխատաքի և ինքնադաստիարակության արդյունք է: Դաստիարակությունը պետք է բոլորին՝ անկախ սեռից, տարիքից, ռասսայից, դեմքից, դիրքից, խելքից, պաշտոնից:

Դաստիրակության չորրորդ առանձնահատկությունը նրա անընդհատությունն է (պերմանենտությունը): Դեպքից դեպք իրականացվող դաստիարակությունը լավ արդյունք տալ չի կարող: Միալն տոնահանդեսները, միայն արտադասարանային, արտադպրոցական միջոցառումները (որոնք նույնպես կարևոր են) չեն կարող ապահովել դաստիարակության գործընթացի «ջրաղացի» մշտական առատ հոսող ջուրը: Դաստիարակության գործընթացը նպատակասլաց, նպատակաուղղված, պլանավորված, ծրագրավորված, անընդհատ ծավալվող գործունեություն է: Կարելի է ասել՝ այն (դաստիարակող գործունեությունը) իր բնույթով նման է հավերժական շարժիչի:

Դաստիրակության գործընթացի հինգերորդ առանձնահատկությունը նրա համալիր (կոմպլեքսային) բնույթն է: Այդ ասելով պետք է հասկանալ դաստիարակության նպատակի, խնդիրների, բովանդակության, սկզբունքների, մեթոդների, հնարների ու միջոցների, դաստիարակության ձևերի զուգակցված կիրառումը: Ոչ միայն այդքանը, այլ նաև դաստիարակությունն իրականացնողների (ընտանիք, դպրոց, շեֆ կազմակերպություններ, հասարակություն և այլն) ջանքերի զուգակցված միասնական ձևով գործադրումն է: Միայն այս կերպ կարելի է հասնել հաջողության:

Դաստիրակության գործընթացի վեցերորդ առանձնահատկությունը նրա երկկողմանի բնույթն է: Այսինքն՝ դաստիարակության գործընթացն ունի ներգործությունների երկու ուղղություն.

- ✓ դաստիրակողից դեպի դաստիրակվողները
- ✓ դաստիրակվողներից՝ դեպի դաստիրակողը:

Սա յուրօրինակ համագործակցություն է, որի ընթացքում իրենց անձը ձևավորում ու զարգացնում են ոչ միայն դաստիարակվողները, այլ նաև դաստիարակողը: Այսպիսի գործընթացում և՛ դաստիարակողը, և՛ դաստիարակվողներն իրականացնում են անձնական և ընդհանուր դաստիարակություն: Նշանակում է՝ և՛ դաստիարակողը, և՛ դաստիարակվողներն իրենց փոխազդեցություններում

ստանձնում են սուբյեկտի (կամ սուբյեկտների) դեր: Ուրեմն դաստիարակության գործընթացում մերթ դաստիարակողն է դառնում սուբյեկտ, մերթ դաստիարակվողը: Միայն այդպիսի գործունեությունը, փոփոխվող և փոխկապակցված նման փոխազդեցությունը կարող է ապահովել դաստիարակության բարձր արդյունք:

Դաստիրակության գործընթացի յոթերորդ առանձնահատկությունը նրա ամբողջական բնույթն է: Այդ նշանակում է՝ դաստիարակվողներին դաստիարակել ոչ թե մեկ ուղղությամբ, այլ դաստիարակության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերի բոլոր ուղղություններով, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական և այլն:

Այնուհետև՝ հասնել յուրաքանչյուր դաստիարակվողի մեջ հասարակական վարքի, բարոյական հատկանիշների, ընտանիքի ղեկավարի կերպարի, քաղաքացիական, հայրենասիրական, ինտերնացիոնալիստական, հումանիստական զգացմունքների, աշխարհայացքի և այլնի ձևավորմանը: Եվ հետո՝ լուծել նրա (դպրոցականի) կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրները:

Դաստիարակության գործընթացն ունի շատ բարդ կառուցվածք: Նրա համակարգի յուրաքանչյուր բաղադրամաս իր հերթին կարող է հանդիսանալ առանձին համակարգ և բովանդակել իրեն հատուկ բաղադրամասեր (կոմպոնենտներ):

Դաստիարակության գործընթացի կառուցվածքը ենթադրում է դաստիարակության նպատակի առկայություն. առաջադրված նպատակին հասնելու համար համապատասխան խնդիրների առաջադրում և լուծում. դաստիարակության բովանդակություն, նրա որևէ բաղադրամասի ուղղությամբ իրականացվող դաստիարակության համար մեթոդների, հնարների, միջոցների ճիշտ ընտրություն և ենթադրվող արդյունքներ. դաստիարակչական գործընթացի արդյունավետության վրա ազդող պայմաններ և այլն:

Այսպիսով, դաստիարակության գործընթացը շատ բարդ, շարունակական, անընդհատության, դինամիկ, դիալեկտիկական գործընթաց է:

Դաստիարակության բովանդակությունը, նրա բաղադրամասերը իրականացվում են համապատասխան մեթոդներով: Դաստիարակության բաղադրամասերը և մեթոդները փոխադարձ կախվածություն ունեն: Ավելին,

դաստիարակության գործընթացի բոլոր բաղադրամասերի միջև ևս կան և՛ կապեր, և՛ կախումներ: Դաստիարակողը, դաստիարակության մեթոդները, հնարները կիրառում է տարբեր ձևերով: Դրանց ընտրությունը և կիրառումը պայմանավորված են դաստիարակողի վարպետությամբ, ստեղծված իրավիճակով և սովորողների տարիքային ու անհատական առանձնահատկություններով: Դաստիարակության գործընթացում կախվածությունն ու կապերը (փոխադարձ) ընդգրկում են նաև դաստիարակի գործունեությունը, նրա յուրահատկությունները:

Դաստիարակության գործընթացում այս կամ այն մեթոդի ընտրությունը և կիրառումը կախում ունեն դաստիարակության բաղադրամասի (օրինակ՝ մտավոր, բարոյական դաստիարակության և այլն) նպատակից, խնդիրներից, տվյալ դեպքում այն բաղադրամասից, որից իրականացվում է դաստիարակությունը, իսկ բաղադրամասն էլ կախում ունի կիրառվող մեթոդներից, հնարներից ու միջոցներից, իսկ դրանք բոլորը՝ դաստիարակությունն իրագործող դաստիարակից ու դրա (դաստիարակության) համար ստեղծված պայմաններից: Այս ամենը վերստին հաստատում են դաստիարակության գործընթացի դիալեկտիկական բնույթը:

Ճիշտ չի միայն մեկ կամ երկու մեթոդով իրականացնել դաստիարակության այս կամ այն բաղադրամասը: Տվյալ դեպքում որևէ բաղադրամասից դաստիարակության իրականացումը ենթադրում է մի շարք մեթոդների կամ մեթոդների խմբերի զուգակցված գործադրում:

Դաստիարակության տեսությունում առկա են դաստիարակության մեթոդների տարբեր դասակարգումներ: Ժամանակակից դպրոցում կիրառվում են դասակարգված մեթոդներից հետևյալ խմբերը:

1.2 ԴԱՍԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Դասի համար ընտրված նպատակի և խնդիրների անորոշությունը միշտ ենթարկվել են քննադատության: Դրանց ձևակերպումներից հաճախ հնարավոր չի լինում հասկանալ, թե ինչ արդյունք էր ուզում ստանալ ուսուցիչը: Նպատակի որոշումը հանդիսանում է ուսուցչի գործունեության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Նպատակը պետք է համապատասխանի պլանավորված արդյունքին:

Նպատակը այն է, ինչին ձգտում ենք, ինչը պետք է իրականացնել: Խնդիրը այն է, ինչը պահանջում է իրագործում, իրականացում: Նպատակին հասնելու համար պահանջվում է ժամանակի երկար հատված:Խնդիրը գործունեության կարճ հատված է, մոտակա նպատակ և պրոբլեմային իրավիճակ: Նպատակը գործունեության արդյունքի մտավոր պատկերացումն է: Ակընկալվող արդյունքի երևակայական պատկերը պետք է լինի հստակ, որակապես և քանակապես բնութագրված, հասանելի տվյալ ժամկետում: Ուսուցման յուրաքանչյուր էլեմենտի բովանդակությունը որոշվում է ուսումնական նպատակով: Ուսումնական խնդիրը, լինելով դասի կառուցվածքային բաղադրիչ միևնույն ժամանակ հանդիսանում է նաև ուսումնական գործընթացի կազմակերպման միջոց: Ուսումնական խնդիրները կարող են ունենալ բովանդակային, դիդակտիկ, մեթոդական կամ հոգեբանական բնույթ: Բ.Բլումը տարբերում է ուսուցման նպատակի երեք ուղղություններ՝ իմացական, էմոցիոնալ և փսիխոմոտորային:

Իմացական (կրթական) նպատակները գիտելիքների և մտավոր կարողությունների ձևավորում բովանդակության իմացություն-թարգմանություն-կիրառում-վերլուծություն-ձևավորում-արդյունքի գնահատում հերթականությամբ:

Էմոցիոնալ նպատակներ – շրջական աշխարհի նկատմամբ վերբերմունքի ձևավորում:

Փսիխոմոտորային նպատակներ – գործունեության ձևերի ձևավորում (գրելու, ընթերցանության հմտություններ, ֆիզիկական դաստիարակության, աշխատանքի ուսուցման):

Դասի ուսուցանող նպատակն է աշակերտների մոտ ապահովել համակարգված գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Գիտելիքների առաջին տիպն է առարակաների, օբյեկտների և երևույթների մասին պատկերացումները, հասկացությունները, օրենքները և օրինաչափությունները: Այսինքն գիտելիքները պարզագույն ձևից մինչև գիտելիքների բարդագույն համակարգը: Գիտելիքների երկրորդ տիպն է գործունեության մասին գիտելիքը, գործողությունները, որ պետք է կատարել որպեսզի օգտագործելով գիտելիքների

առաջին տիպը հնարավոր լինի կիրառել, վերափոխել և ստանալ նոր տեղեկություններ: Նման գիտելիքներ դպրոցում քիչ են տալիս: Դաստիարակող նպատաը նպաստում է գիտելիքի, ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը, գաղափարների, տեսակետերի, սկզբունքների, անձնական որակների, գնահատման, ինքնագնահատման և ինքնուրույնության ձևավորմանը, ցանկացած միջավայրում համարժեք վարքի ձեռքբերմանը:

Զարգացնող նպատակները նպաստում են ընդհանուր ուսումնական և հատուկ կարողությունների, մտածողության, էմոցիոնալ զարգացմանը, խոսքի զարգացմանը, երկխոսության, հաղորդակցման, ինքնավերահսկողության և ինքնագնահատման ձևավորմանը և զարգացմանը: Ուսուցիչը դասի նպատակը որոշելիս կարող է սկսել ձևակերպելով այն բայերը, որոնք ընդգրկում են ուսումնական նյութի բովանդակությունը, ուսուցչի գործողությունները, աշակերտի գործողությունները, որ ուղղված են դասի նպատակին հասնելուն:

Դաստիարակության տարբեր կողմերի շարքում գլխավոր տեղը հատկացվում է բարոյականության դաստիարակությանը, որովհետև, բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն, ազնվություն և ուղղամտություն, աշխատասիրություն, կարգապահություն և պատասխանատվության զգացում, որը զուգակցվում է համեստության հետ: Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք, տոկունություն, պարտքի զգացում:

Ուսուցանող նպատակ

1. Ապահովել.
   ա. ուսումնական նյութի ընկալումը բոլոր աշակերտների կողմից,
   բ. դրա յուրացման չափորոշիչներով պահանջվող մակարդակը,
   գ. գիտելիքների կիրառումը:
2. Հասնել նրան, որ
   - Ձևավորել ունակություններ,

- Ընդհանրացնել և համակարգել ունակությունները:

Դաստիարակող նպատակ

1. նպաստելընդունակություններիբացահայտմանը
2. առաջացնել հետքրքրություն
3. ձևավորել, ամրապնդել ունակություններ
4. համոզել նպատակահարմարության մեջ:

Զարգացնող նպատակ

1. նպաստելկայացմանընզարգացմանը
2. օգնել:

Դասի նպատակը որոշելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի ոչ միայն այն, թե ինչ նյութ յուրացում նշանակում է այն կիրառելու կարողություն: Վ.Պ.Բեսպալկոն տարբերում է նյութի յուրացման հետևյալ մակարդակները.

- գիտելիք-ծանոթություն [ճանաչել, տարբերել],
- գիտելիք-պատճեն [հիշողությամբ կամ հասկանալով վերարտադրում],
- գիտելիք-կարողություն [գիտելիքների կիրառում նման, այսինքն ծանոթ իրավիճակում],
- գիտելիք-ձևափոխություն [գիտելիքների կիրառում անծանոթ, ոչ սովորական իրավիճակում]:

Ուսուցիչը, հաշվի առնելով ուսուցման կոնկրետ պայմանները, ձևակելպում է կոնկրետ ուսումնական խնդիրներ: Միայն այն դեպքում, երբ աշակերտը հասկանում է խնդիրը և այն ընդունում է որես սեփական խնդիր, նրա գործողությունները դառնում են նպատակաուղղվածև նպատակադրված: Որպեսզի աշակերտը ընդունի այդ նպատակը, նրան պետք է դնել այնպիսի իրավիճակի մեջ, որ նա ունենա լրացուցիչ գիտելիքի պահանջ: Աշակերտը նաև պետք է հասկանա, թե կոնկրետ ի՞նչ գիտելիք է իրեն հարկավոր և ի՞նչ նպատակով է կիրառելու այդ գիտելիքը:

Բայց այս ամենը կաշխատի արդյունավետ միայն այն դեպքում, երբ ուսուցիչը պլանավորել է իր յուրաքանչյուր քայլը և ըստ այդ պլանի, քայլ առ քայլ

իրականացնում է իր աշխատանքը: Աշակերտի և ուսուցչի նպատակների համատեղումը խոսում է ուսուցչի վարպետության մասին:

Դասի նպատակը անհատականության զարգացման և ձևավորման կանխորոշված արդյունքն է, որին փորձում են հասնել դաստիարակչական աշխատանքի գործընթացում: Կրթության նպատակի իմացությունը ուսուցչին տալիս է հստակ պատկերացում, թե ինչպիսի մարդ պետք է ձևավորի և, բնականաբար, իր աշխատանքին տալիս է անհրաժեշտ ուղղությունն ու իմաստը: Փիլիսոփաները պնդում են, որ նպատակը անխուսափելիորեն որոշում է մարդու գործունեության ուղին և բնույթը: Այս իմաստով դասի նպատակը ենթակա է ամեն ինչի՝ բովանդակության, կազմակերպության, դաստիարակության ձևերի և մեթոդների: Նպատակը կրթական համակարգի որոշիչ բնութագիրն է: Դրան հասնելու նպատակն ու միջոցն է, որ առանձնացնում են որոշ համակարգեր մյուսներից; Համակարգեր, որոնք ուղղված են երեխայի կարիքների բավարարմանը: Ժամանակակից աշխարհում կրթության բազմաթիվ նպատակներ և համակարգեր կան: Նպատակների միջև տարբերությունների շրջանակը լայն է; Սկսած մարդու որոշ որակների փոքր փոփոխություններից մինչև նրա անհատականության կարդինալ փոփոխությունները:

Դասի նպատակը որոշում է կրթության ընդհանուր նպատակասլացությունը: Կրթական աշխատանքում ուսուցիչը դնում է հատուկ նպատակներ ՝ ընտրելով կրթության գործունեության համապատասխան բովանդակությունն ու մեթոդները, և կրթության իրական արդյունքները համեմատում է ընդհանուր նպատակի հետ: Մանկավարժության մեջ դաստիարակության հատուկ նպատակները կոչվում են առաջադրանքներ:

Առանձին կրթական համակարգի շրջանակներում նպատակը միշտ նույնն է: Կրթության խնդիրը, ուսուցիչը որոշում է, հաշվի առնելով մի քանի պատճառներ:

Դաստիարակության ընդհանուր նպատակի իրագործումը, առաջին հերթին, պահանջում է դրա կոնկրետացում ըստ բնութագրերի[4]՝

- Ազգային-տարածաշրջանի,

[4] https://studbooks.net/32067/pedagogika/tsel_vospitaniya

- ըստ միջավայրի (քաղաք, գյուղ),
- դպրոցի տեսակի,
- կրթության փուլի,
- սեռի և տարիքի:

Կրթական առաջադրանքների դասակարգման երկրորդ կարևոր հիմքը անհատականության ինքնաիրացումը և ինքնահաստատումն է: Ըստ այդմ, առանձնացվում են կրթության խնդիրները:

Դասակարգման երրորդ հիմքը կարող է լինել վարքագծի և գործունեության բաղադրիչների վերլուծությունը և բարոյական, աշխատանքային, մտավոր սովորությունների, հմտությունների, վարքագծի, գործունեության, դիրքի ինքնակարգավորվելու կարողությունների բաշխումը՝ որպես կրթության առաջադրանքներ: Չորրորդ հիմքը կարող է լինել անհատի բարոյական զարգացման բաղադրիչների ընտրությունը՝ բարոյական ապրումներ, գիտելիքներ, համոզմունքներ, փոխհարաբերություններ: Հինգերորդը՝ անհատականության համակարգային բաղադրիչի վերլուծություն և առանձին ոլորտների վրա կրթական ազդեցության խնդիրների բաժանում:

Ըստ իրենց բովանդակության՝ կրթության նպատակները հասարակության կողմից մշակված սոցիալական գաղափարներն են: Յուրաքանչյուր սոցիալական գաղափար համապատասխանում է անհատականության որոշակի բաղադրիչին: Ուստի դաստիարակության նպատակը իրական է դառնում, եթե այն ստանում է հոգեբանական ձև:

Ժամանակակից մանկավարժության կարևոր խնդիրներից է կրտսեր դպրոցականի բարոյական դաստիրակության գործընթացի արդիականացումը, մասնավորապես մարդասիրական վերաբերմունքի ձևավորումը: ՈՒսուցչի խնդիրը երեխաների մեջ շրջապատի մարդկացն նկատմամբ բարյացակամ և հանդուրժող վերաբերմունքի ձևավորումն է, տարեկիցների, մեծերի և փոքրերի հետ հարաբերություններում ապրումակցման, ըմբռնման, նրանց դրության մեջ մտնելու ունակության զարգացումը, մարդասիրական, փոխըմբռնման ու համագործակցային հարաբերությունների առավելությունների գիտակցումը:

Կրտսեր դպրոցականի տարիքում երեխաների մեջ անհրաժեշտ է դաստիրակել ոչ հարմարավետ իրավիճակներում գտնվող իրենց տարեկիցներին օգնելու պատրաստակամություն, հուզական որոշակի դժվարություններում գտնվող ընկերոջ վիճակը նկատելու, նրան հասկանալու ունակություններ և այլն: Դեռևս տարիքային այս փուլում պիտի օգնել երեխաներին՝կազմակերպելու ինքնուրույն գործունեություն,նպաստելու նրա զարգացմանը, վարքագծի կայունացմանը, իր առջև դրած նպատակին հասնելու ձգտմանը: Չափազանց կարևոր է նաև սեփական ոչ հարմարավետ վիճակն ինքնուրույն հաղթահարելու կարողության ձևավորումը, վիրավորանքի արցունքները զսպելու, իրեն կարգի բերելու, դաստիրակողից օգնություն խնդրելու կանոնների ուսուցումը:

1.3 ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցումը երեխաների իմացական ընդունակությունների սիստեմատիկ, պլանաչափ,նպատակաուղղված զարգացման գործընթաց է,որի ընթացքում հաղորդվում է տարրական գիտելիքների համակարգ, ձևավորվում է տարիքին համապատասխան մտավոր գործունեության ունակություններ և հմտություններ: Միանգամայն հասկանալի է, որ իր բովանդակությամբ, կազմակերպչական ձևերով ու մեթոդներով տարրական դպրոցում իրականացվող աշխատանքը խստորեն տարբերվում է տանը և արտադասարանական այլ հաստատություններում իրականացվող աշխատանքներից: Տարրական դպրոցում աշակերտներին մատուցվում են գիտական գիտելիքների հիմունքներ: Տարրական դպրոցում ուսուցման հիմնական ձևը դասարանական պարապմունքն է, որը տարբերվում է իր տևողությամբ, կառուցվածքով, երեխաներին ներկայացվող պահանջների մակարդակով: Այստեղ երեխաները ստանում են տնային աշխատանք, գնահատականներ, իսկ գիտելիքների յուրացումը ճշտվում է պարապմունքների ընթացքում՝ նոր գիտելիքների հաղորդման ժամանակ: Այլ են նաև ուսուցման մեթոդները: Տարրական դպրոցում լայնորեն օգտագործվում են զննական մեթոդները,

խաղային հնարները, դիդակտիկ խաղերը և այլն: Ուսուցման արդյունավետությունը ապահովվում է դասավարի ու երեխաների կողմից դրսևորված ակտիվությամբ: Սա նշանակում է, որ ուսուցումը երկկողմանի գործընթաց է, ուր ղեկավար դերը պատկանում է դասվարին: Տարրական դպրոցում սովորող աշակերտի համար ուսուցիչը վարպետ է ում ասած յուրաքանչյուր խոսքը աշակերտի համար անփոփոխ դոգմա է և հենց այդ վարպետ մանկավարժի ճիշտ ընտրությունից է կախված ուսումնադաստիարակչական ողջ գործընթացի արդյունավետությունը:

Իսկական ուսուցիչը միշտ էլ ցանկացած հարցի կգտնի ոչ ստանդարտ պատասխան, կկարողանա յուրահատուկ մոտեցում ցուցաբերել աշակերտի նկատմամբ, նրա մեջ առաջացնել հետաքրքրասիրություն, ոգևորել նրան:

Մանկավարժի արվեստը հատկապես արտահայտվում է հենց դասի ժամանակ սովորեցնելու ունակության մեջ: Նրա համար տնային առաջադրանքը գիտելիքները խորացնելու, ամրապնդելու,ընդլայնելու միջոց է: Փորձառու ուսուցիչների հաջողության գաղտնիքը կայանում է աշակերտների գործունեությունը ղեկավարելու ունակության մեջ: Վարպետության ևս մեկ ցուցանիշ է աշակերտներին ակտիվացնելու, նրանց ընդունակությունները, ինքնուրույնությունը զարգացնելու ունակությունը, նրանց դասի ժամանակ մտածել ստիպելը, կիրառել տարբեր մեթոդներ ուսուցման պրոցեսը ակտիվացնելու համար: Ուսուցման ընթացքում դաստիարակչական աշխատանքը արդյունավետ անցկացնելու, աշակերտների մոտ բարձր բարոյականություն, հայրենասիրության, զգացում, աշխատասիրություն, ինքնուրույնություն ձևավորելու ունակությունը մանկավարժական վարպետության ևս մեկ տարր է: Ուսուցիչը, որը չի տիրապետում վարպետությանը կարծես թե աշակերտների վրա է փաթաթում գիտելիքները, իսկ այն ուսուցիչը, որը տիրապետում է այդ վարպետությանը կկարողանա ճանաչման արմատը դարձնել քաղցր, ուսուցման պրոցեսում կգտնի դրականը, կզուգակցի աշխատանքի մեթոդները, կբերի հետաքրքիր օրինակներ, կգտնի գիտելիքների փոխանցման օրիգինալ եղանակներ: Դպոցականների դաստիարակության գործում մանկավարժական վարպետությունը ունի մեծ ուժ և վճռորոշ նշանակություն: Ուսուցչի մանկավարժական վարպետությունը արդյունավետ ուսուցման

նախապայմանն է: Մանկավարժական վարպետությունը ուսուցչի անձնական որակների, գիտելիքների, մանկավարժական կարողությունների ու հմտությունների համադրությունն է: Այն պահանջում է նաև խորը գիտելիքներ հոգեբանությունից և հատուկ պրակտիկ պատրաստվածություն: Առաջին հերթին մանկավարժը պետք է տիրապետի երեխաների հետ շփման արվեստին, անհրաժեշտ տոնը և ոճը, պարզություն և բնականություն ընտրելու ունակությանը: Վարպետը աշակերտների հետ չի խոսի արհեստական, հրամայողական կամ կենցաղային տոնով: Տեմպի զգացողությունը նույնպես բնորոշ է մանկավարժին:Շատ սխալների պատճառներից մեկը կայանում է նրանում, որ մանկավարժները վատ են չափում իրենց գործողությունների տեմպը՝ կամ շտապում են, կամ ուշանում, իսկ դա նվազեցնում է մանկավարժական ազդեցության արդյունավետությունը: Մանկավարժական շփումը մանկավարժի կողմից երեխաների հետ կոնտակտի հաստատումն է: Այն կարելի է սահմանել նաև որպես աշակերտների հետ մանկավարժի մասնագիտական փոխներգործություն, որն ուղղված է վստահելի հարաբերությունների հաստատմանը: Այստեղ կարևոր դեր են խաղում խոսքի կուլտուրան, ճիշտ շնչառությունը, ձայնը: Մանկավարժը կսկսի սովորել ղեկավարել սեփական ձայնը, դեմքը, պահել դադարը, դիմախաղը, շարժումները: Տարրական դպրոցի վարպետ-մանկավարժի կարևոր խնդիրներից է աշխատանքն ընտանիքի հետ: Ժամանակակից մանկավարժները ընտանիքներին վերաբերվում են որպես գործընկերոջ և շարունակաբար իրականացնում են հետադարձ կապ:

ԳԼՈՒԽ 2

ԴՊՐՈՑ - ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2.1 ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ[5]

Կրտսեր դպրոցականի դաստիարակությունն սկսվում է իր ապրած միջավայրի սոցիալական փորձի,ընդունված վարքագծի կանոնների, փոխհարաբերությունների, հասարակության մասին պարզագույն գիտելիքների, բարոյական արժեքների, կյանքի մասին նախնական հայացքների յուրացմամբ, որոնց շնորհիվ նա օրըստօրե բացահայտում է իրեն ու իր շրջապատը, սկսում է գիտակցել իր պատկանելիությունն ընտանիքին,դպրոցին,քաղաքին ու հայրենիքին:Հենց այդ միջավայրն է,որ երեխային ստիպում է դրսևորել արժանավայել պահվածք, հարգի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունը,լինի մարդասեր, հանդուրժող,դրսևորի աշխատասիրություն,հնարամտություն, նպատակադրվածություն և գնահատի սեփական և այլոց աշխատանքը:Սակայն նշված որակները ժամանակակից դպրոցականի մեջ ձևավորելը հնարավոր է միայն դպրոցի և ընտանիքի փոխհամաձայնեցված գործելակերպի ու արդյունավետ համագործակցության պարագայում,երբ առկա է փոխադարձ հարգանքի, աջակցության,միմյանց նկատմամբ վստահության,համբերատարության ու հանդուրժողականության մթնոլորտ:Հայտնի է,որ կրտսեր դպրոցականի սոցիալականացումն առավելապես իրականանում է երկու հաստատություններում՝ ընտանիքում և դպրոցում:Ընտանիքն է երեխային փոխանցում իր ազգի սոցիալ-պատմական փորձը, բարոյական արժեքները,ավանդույթներն ու սովորույթները,իր ամենօրյա գործելակերպով,դատողություններով սովորեցնում շրջապատի նկատմամբ լինել բարյացկամ,գթասիրտ,վարժեցնում է հասարակության մեջ ընդունված կանոններին:

Չնայած այդ ամենին,ընտանեկան դաստիարակությունը կրում է տարերային բնույթ, ի տարբերություն դպրոցի,ուր դաստիարակությունը մանկավարժորեն նպատակաուղղված է,ընթանում է տարեկիցների և ուսուցիչների մասնակցությամբ:

Այնուամենայնիվ ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքներում և՛ դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն: Ոչ՛ ծնողները, ոչ՛ուսուցիչները չեն կարող մեկուսացված փոխանցել այն բոլոր գիտելիքները,հմտությունները և արժեքները, որոնք անհրաժեշտ են երիտասարդներին՝հասարակության մեջ պատշաճ կերպով ինտեգրվելու համար: Ընտանիքն ու դպրոցը երկուստեք հաճախ սկսում են կորցնել կողմնորոշումը՝ կանգնելով այնպիսի բարդ խնդիրների առաջ, ինչպիսիք են՝գերտեղեկատվությունը և զանգվածային լրատվության միջոցների կողմից առաջարկվող այլընտրանքային մոդելները: Այդ տեսակետից գերխնդիր է դառնում երեխաների,ծնողների ու դպրոցների միջև գործարար ու նպաստավոր համագործակցության կառուցումը:

Դպրոց-ընտանիք ճիշտ փոխհարաբերությունները նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը: Դպրոց-ընտանիք համագործակցությունը ժամանակակից դպրոցում բնորոշվում է նաև մեկ այլ օբյեկտիվ պահանջներով ու անհրաժեշտությամբ:

Այն ենթադրում է .

1. ողջ հասարակության կրթադաստիարակչական մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ,
2. ընտանիքի կրթական մայարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ, ընտանիքում դաստիարակչական աշխատանքների ու ձևերի շտկում,
3. սովորողի ուսման,դաստիարակության հարցերում ընտանիքի,դպրոցի, հասարակության պատասխանատվության բարձրացում,

   Այսպիսով՝ դպրոց-ընտանիք համագործակցությունը մի գործընթաց է,որը չի ավարտվում ուսումնառության այս կամ այն տարում,այլ շարունակական է և ներգրավված կրթադաստիարակչական ամբողջական գործընթացի մեջ,և նրա ապահովումը՝ժամանակակից պայմաններում դպրոցի,ընտանիքի,հասարակության զարգացման տեսանկյունից ,կարևորագույն նպատակ է համարվում:[5]

Խոջոյան Լ. ընտանիք-դպրոց համագործակցություն, նախաշավիղ, 2017, N1 ,էջ 56-61,

Կրտսեր դպրոցում ուսումնադաստիարակչական ճիշտ դրվածքի համար անպայման պետք է իմանալ, թե ինչպես է դաստիարակվում երեխան ընտանիքում, ինչպիսի՞ գործնական հմտություններով է առաջին անգամ եկել դպրոցական կոլոկտիվ, ինչու՞մն է կայանում երեխային շրջապատող մարդկանց դաստիարակչական ներգործությունների թույլ և ուժեղ կողմերը, համաձայնեցվում է արդյո՞ք ընտանեկան դաստիարակությունը դպրոցում տարվող դաստիարակության սկզբունքների ու մեթոդների հետ և նմանատիպ այլ հարցեր: Տարրական դպրոցի ուսուցչի և ծնողների հետ համագործակցությունը կարևոր նախադրյալ և մանկավարժական պայման է՝ ապահովելու համար երեխաների համակողմանի դաստիարակությունը և իրականացնելու դպրոցի կրթական նպատակները: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունն արդիական է, քանի որ երեխայի բազմակողմանի դաստիարակությունը պայմանավորված է միմյանց նկատմամբ երկկողմանի վերաբերմունքի բնույթով,որի հիմքում պետք է լինեն՝ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության, օժանդակության, համբերատարության և հանդուրժողականության սկզբունքները: Ընտանիք-դպրոց համագործակցության նպատակը երեխայի՝ինքնորոշման, ինքնակառավարման, առօրյա կյանքի խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումն է: Պարզ է, որ այս խնդիրների լուծումը պահանջում է կոլեկտիվ ջանքեր, որոնք ցանկալի արդյունք կտան այն ժամանակ, երբ ընտանիքն իմանա, թե ինչ է անում դպրոցը, իսկ դպրոցն իմանա, թե ինչ պայմաններում և ինչպես է դաստիարակվում երեխան ընտանիքում:

Այդ է պատճառը, որ կրտսեր դպրոցի ուսուցիչները մշտական կապ են պահպանում ընտանիքների հետ: Նրանք երեխաների դաստիարակության մեջ հենվում են ընտանիքի վրա, համագործակցում ծնողնորի հետ, մշակում համատեղ ծրագրեր և գտնում դրանց իրականացման արդյունավետ եղանակներ:

Քննարկենք կրտսեր դպրոցականների ծնողների հետ աշխատելու առավել տարածված ձևերը՝

1. Համադպրոցական,դասարանական ծնողական ժողովները
2. Դպրոցականի տուն կատարվող այցերը

3. Աշխատանքը ծնողական ակտիվի հետ
4. Ծնողների մանկավարժական լուսավորությունը և այլն:

1. Դասարանական ծնողական ժողովներ: Ծնողական ժողովների կազմակերպումը դպրոց-ընտանիք համագործակցության ամենատարածված ձևն է:Ծնողական ժողովներն անց են կացվում ուսումնական տարվա սկզբին և ուսումնական քառորդի վերջին՝դասարանում ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի և խնդիրների հետ ծնողներին ծանոթացնելու նպատակով:Այդ ժողովներում քննարկվում են դպրոցում և ընտանիքում երեխաների դաստիարակման կարևոր հարցերը:Հարկավոր է,որ դասվարը չսահմանափակվի միայն առաջադիմության արդյունքների և կարգապահության վիճակի մասին ինֆորմացիա տալով:Կարևոր է ծնողներին ծանոթացնել ընտանեկան դաստիարակության փորձի հետ,նրանց օգնել ավելի լավ իմանալու երեխաների դաստիարակության բարդ հարցերը:
2. Դպրոցականի տուն կատարվող այցերը: Այս ձևը կրտսեր դպրոցում աշակերտների ծնողների հետ անհատապես աշխատելու ամենատարածված և արդյունավետ ձևն է: Տուն այցելելու դեպքում դասվարը ծանոթանում է իր աշակերտի կյանքի պայմաններին,պատկերացում է կազմում աշակերտի բնավորության,նրա հետաքրքրությունների ու հակումների,մեծերի և փոքրերի հետ նրա փոխհարաբերությունների մասին: Կանոնավոր կերպով աշակերտների տները այցելելով՝դասղեկն աշակերտների վերաբերյալ արժեքավոր նյութ է կուտակում,ուսումնասիրում է երեխաների և ծնողների մեջ ստեղծված փոխհարաբերությունները,պարզում,թե աշակերտնորը տանը ինչպես են անցկացնում իրենց ազատ ժամանակը:Դրա հետ մեկտեղ նա հասնում է այն բանին,որ աշակերտների մեջ բարոյական անհրաժեշտ հատկություններ ձևավորելու գործում ծնողները դառնան դպրոցի մերձավոր օգնականները:
3. Ծնողների մանկավարժական լուսավորությունը: Ծնողները մանկավարժական գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն ժողովների և կոնֆերանսների,զեկուցումների և դասախոսությունների ժամանակ,այկն

օգտվելով երեխաների դաստիարակությանը նվիրված գրականություններից:Վերջին տարիներին ստեղծվել է,այսպես կոչված ծնողական պարտադիր ուսուցումը,որի հիմնական նպատակը կայանում է գիտամեթոդական աշխատանքների անցկացումը և որն իր մեջ ներառում է տարրաբնույթ ձևեր հոգեբանամանկավարժական գիտելիքների հանրամատչելիության տարածումը ծնողների մեջ: Օրինակ, լայն տարածում է ստացել՝<<երիտասարդ մայրերի դպրոցը>>, որտեղ մանկավարժական գիտելիքների հիմքում ընկած են այն կանայք,որոնք կամ ապագա մայրեր են կամ էլ ունեն դպրոցահասակ երեխաներ: Նրանք ուսումնասիրում են երեխաների ֆիզիկական զարգացման,սանիտարահիգիենիկ խնամքի մասին հարցեր, տիրապետում են նրանց խոսքի զարգացման մեթոդիկայի և այլն:

Ժամանակակից դպրոցում, բացի վերը նշված համագործակցության ավանդական ձևերից,կիրառվում են նաև ոչ ավանդական ձևեր՝թեմատիկ խորհրդատվություններ, ծնողական ընթերցումներ,ծնողական երեկոներ,ծնողական մրցույթներ,ծնողական թրեյնինգներ և այլն:Համագործակցության այս ձևորից յուրաքանչյուրն ունի իր նպատակը և որոշակի խնդիրներ,սակայն դրանք բոլորն էլ իրենց հերթին ունեն մեկ ընդհանուր նպատակ՝ավելի լավ ճանաչել սեփական երեխային,ավելի շատ կիրառական գիտելիքներ ձեռք բերել երեխային ճիշտ դաստիարակելու ուղղությամբ,օգնել երեխային ինքնորոշվելու,փորձել հասկանալ նրա հոգեվիճակը,ավելի մոտ գտնվել նրա աշխարհին,հասկանալ նրա ներաշխարհը:Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների օրըստօրե զարգացումը մեծապես նպաստում է դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետության բարձրացմանը: Ներկայումս ծնողները համակարգչի միջոցով կարող են տեղեկատվություն ստանալ իրենց երեխաների առաջադիմության մասին dasaran.am կայքի միջոցով: Սա ևս ժամանակակից դպրոցի համագործակցության ձևերից է և ունի լայն կիառություն: Այսպիսով,դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկկողմանի երկարատև ու նպատակասլաց գործընթաց է,այն ունի մեկ նպատակ՝երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացում և դաստիարակություն,և պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված:

2.2 ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տարրական դպրոցի ուսուցչի և ծնողների հետ համագործակցությունը կարևոր նախադրյալ ու մանկավարժական պայման է՝ապահովելու համար երեխաների դաստիրակությունը և իրականացնելու դպրոցի կրթական նպատակները: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունն արդիական է, քանի որ երեխայի բազմակողմանի դաստիրակությունը պայմանավորված է միմյանց նկատմամբ երկկողմանի վերաբերմունքի բնույթով, որի հիմքում պետք է լինեն վստահության , փոխադարձ հարգանքի, փոխօգնության, օժանդակության, համբերատարության և հանդուրժողականության սկզբունքները:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության նպատակը երեխայի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, առօրյա կյանքի խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումն է: <<Ես գրեթե չեմ լսել, - գրում է Ա.Ս. Մակարենկոն, - որ ծնողներն ասեն մենք պետք է դաստիրակենք, ինչու ՝ է դպրոցը խանգարում: Եվ չեմ էլ լսել, ոինչու ր մանկավարժն ասի, դպրոցը պետք է դաստիրակի, ինչու է ընտանիքի խանգարում: Ընդհակառակը, դպրոցը պահանջում է, որ ծնողները դաստիրակեն երեխաներին, իսկ ծնողներն ահդ բանը սպասում են դպրոցից>>: Այս փոխադարձ պահանջները դեռևս ցավոք դիտվում են հատկապես տարրական դպրոցում: Սակայն պարզ է, որ այս խնդրի լուծումը պահանջում է կոլեկտիվ ջանքեր որոնք ցանկալի արդյունք կտան այն ժամանակ երբ ընտանիքն իմանա, թե ինչ է անում դպրոցը ,իսկ դպրոցն իմանա, թե ինչ պայմաններում և ինչպես է դաստիրակվում երեխան ընտանիքում: Նոր տնտեսվարման պայմաններում քաղաքական, սոցիալտնտեսական, հասարակական և մշակութային համապարփակ փոփոխություններով պայմանավորված հայ ընտանիքներում առավել նկատելի են դառնում սոցիալ-հոգեբանական տարրաբնույթ ճգնաժամային երևույթները, որոնք էապես խոչընդոտում են դպրոց-ընտանիք համագործակցության կայացմանը: Ընտանեկան ճգնաժամը հիմնականում արտահայտվում է նրանում, որ ընտանիքն օրեցօր ավելի վատ է իրականացնում իր

հիմնական գործառույթը՝ երեխայի դաստիրակությունը, որի հետևանքով՝ բարձրակարգ մասնագետների մեծամասնությունը կորցնում է իր աշխանքը և դառնում գործազուրկ:

- Ընտանիքի նյութական միջոցները հայթայթելու համար շատ ընտանիքի հայրեր մեկնում են արտագնա աշխատանքի ,
- Շատ ծնողներ ստիպված սկսում են աշխատել ցածրակարգ իրենց մասնագիտությունը չհամընկնող ոլորտներում և մասնավոր աշխատանքի չնորմավորված աշխատաժամանակով պայմանավորված՝ օրվա ընթացքում երեխայի հետ գրեթե չեն շփվում:

Իսկ ինչ կարող է առաջարկել հումանիստական դաստիրակությունն ընտանիքի ճգնաժամը հաղթահարելու և նրա հետ համագործակցությունը ակտիվացնելու համար: Միայն միջոցը վարպետ մանկավարժի ճկուն և հաստատուն գործելակերպն է, ով իր գործունությունն ընտանիքի նկատմամբ վերակառուցում է նոր պայմաններին համապատասխան:

Ներկայումս տարրական դասարաններում որպես ընտանիքի հետ համագործակցության հիմնական միջոցները , կիրառվում են դասարանական ծնողական ժողովները և ծնողների անհատական խոհրդատվության տարբեր ձևերը: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ համագործակցության կայացման առումով էական նշանակություն ունի դասվարների հաղորդակցման ոճն իրենց աշակերտների ծնողների հետ, դասվարի մենախոսությունը պետք է իր տեղը զիջի ծնողների հետ երկխոսությունը առկա խնդիրների շուրջ,անկեղծ մտահոգությանը, որի ընթացքում երկու կողմերը միմյանց հետ փոխանակում են կարծիքներ, առաջարկներ, համատեղ որոնում երեխաների դաստիրակության արդյունավետ ուղիներ[6]:

Ծնողների խորհրդատվության ժամանակակից դպրոցի ու ընտանիքի համագործակցության ամեմաարդիական և պահանջված եղանակն է: Ծնողների

[6] http://www.ysu.am/files/1-1511355539-.pdf

մեծամասնությունն ինքնակրթությանը համար ժամանակ չի ունենում և սովորաբար խորհրդատվության համար դիմում է հենց դպրոցին: Խորհրդակցության հիմնական նպատակը շնողների ձգտումն է՝ ավելի խորը և օբյեկտիվ պատկերացում ունենալ իր երեխայի առաջադիմության, վառքագծի հետ կապված խնդիրների մասին, լսելու պրոֆեսոիանալ մանկավարժի դիտարկումներն ու խորհուրդները և ըստ այդմ, առավել որոշակիացնելու կամ շտկելու, վերակազմակրպելու սեփական դաստիրակչական հնարները:

Սակայն կան այլ միջոցներ ևս, որոնք այսօր հազվադեպ են գործադրվում: Դրանցից են՝

- մանկավարժական փորձի փոխանակման համաժողովները,
- ծնողների հետ հարց ու պատասխանի երեկոները, դասախոսություններն ու զրույցները,
- դպրոցական կոլեկտիվի և ընտանիքի անդամների հանդիպումները
- կլոր սեղան-քննարկումներ
- բանավեճերը՝ տարբեր մասնագետների մասնակցությամբ:

Երեխայի դաստիրակության հարցում ծնողների և դասվարների ցանկությունները համընկնում են և նրանք գործադրում են որոշակի ջանքեր՝ծնող-դասվար համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու համար:

Սակայն դպրոցի և ընտանիքի համագործակցության առավել արյունավետ կլինի եթե.

- ծնողները պարբերաբար և անմիջականորեն շփվեն դասվարի հետ, այլ ոչ թե՝ ժողովից ժողով և միայն երեխայի օրագրում արված նշումներից տեղեկանան նրա ուսումնադաստիրակչական առօրյայի մասին,
- դասվարը դասարանում առկա բոլոր դժվարությունների մասին տեղեկացնի ծնողներին, որպեսզի նրանք էլ այդ խնդիրներին տանը հատուկ ուշագրություն դարձեն,

- ծնողները երեխայի ցանկացած դաստիրակչական խնդրի լուծումն ընտրեն դասվարի խորհորդները լսելուց հետո, , որպեսզի դասվարն իր հերթին այդ խնդրի լուծմամբ զբաղվի ուսուցման գործընթացում,
- դասվարը հաղորդակցվի ծնողների հետ, այցելի նրանվ տուն ՝ ծանոթանալու երեխայի ընտանեկան պայմաններին, ընտանիքում տիրող մթնոլորտին և միջանձնային փոխհարաբերություններին
- դասվարը ծնողների հետ անհատական զրույցների ժամանակ բացի երեխաների վարքի կամ առաջադիմության մասին հաշվետվությունից ,նրանց հաղորդի հոգեբանական և մանկավարժական բնույթի խորհուրդները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով:

Ընտանիք-դպրոց համագործակցությունը նպաստում է դաստիարակչական միասնական տարածքի ստեղծմանն ու ընտանեկան և դպրոցական դաստիարակության ինտեգրմանը և կարող է ներդրվել ներդպրոցական կառավարման համակարգում:

Մեր կողմից կատարված սոցիալական հարցման արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

- ❖ Ընտանիք-դպրոց համագործակցության հիմնական մեթոդներն են.

1) ծնողական ժողովների հաճախակի իրականացումը,
2) ծնողների հետ անհատական խորհրդատվության կազմակերպումը,
3) ծնողներին ծնողավարման ձևերի ծանոթացումը:

Կարևոր է որ դպրոցի, ուսուցչի և ծնողի համար լինի մեկ գլխավոր նպատակ՝այն է խթանել այն գործոնների զարգացմանը, որոնք բխում են երեխայի շահերից:

- ❖ Ընտանիքների հետ համագործակցելիս առաջանում են որոշակի խնդիրներ, որոնցից կարևորագույն են համարվում՝

1) Սոցիալական: Երբ կան երեխաներ որոնց ընտանիքում չկան բավարար միջոցներ, որ երեխան ապահովվի անհրաժեշտ պարագաներով դպրոց հաճախելիս:
2) Բարոյահոգեբանական: Այստեղ բախվում ենք այն փաստին, որ երբեմն ծնողները երեխաների չեն սովորեցրել մանկուց ղեկավարել իրենց ցանկությունները, ծնողները չեն ընդունում իրենց երեխայի թույլ կողմերը, չեն ցանկանում լսել ուսուցչի բողոքներն իրենց երեխայի մասին:

- Կրտսեր դպրոցականի դաստիարակության վրա ուսուցիչ-ծնող կապը ազդում է դրականորեն: Ծնողի ներգրավվածությունը օգնում է կրտսեր դպրոցականին լինել ավելի պատասխանատու, ընկալել կարևորը և ունենալ բարձր առաջադիմություն:
- Ուսուսիչ-ծնող համագործակցության համար կարևոր գործոններ են հանդիսանում մշտական անմիջական շփումը, հետևողականությունը, վստահությունը և գիտակցական վերաբերմունքը:
- Ծնողական ժողովների ժամանակ համագործակցության կայացման առումով էական նշանակություն ունի դասվարների հաղորդակցման ոճն իրենց աշակերտների ծնողների հետ, դասվարի մենախոսությունը պետք է իր տեղը զիջի ծնողների հետ երկխոսությունը առկա խնդիրների շուրջ,անկեղծ մտահոգությանը, որի ընթացքում երկու կողմերը միմյանց հետ փոխանակում են կարծիքներ, առաջարկներ, համատեղ որոնում երեխաների դաստիրակության արդյունավետ ուղիներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Պետրովսկի Ա.Վ.,Երեխաները և ընտանեկան դաստիարակության տակտիկան.-Երևան,Լույս 1983
2) Նալչաջյան Ա., Մկրտչյան Ս., Ընտանիքի հոգեբանություն:Զանգակ-97,2001 <<Ընտանիք>>ինստիտուտի հետազոտություն-Երևան,2006:
3) Խոջոյան Լ. ընտանիք-դպրոց համագործակցություն, նախաշավիղ, 2017, N1 ,էջ 56-61,
4) Սարոյան Վ. մեծահասակների հետ համագործակցությունը որպես ապագա դպրցականի անձի ձևավորման պայման, նախաշավիղ, N 2, 2010 , էջ26-32
5) Ջանիկյան Ս. դպրոցի- ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների գործընթացում, նախաշավիղ, N 7 , 2010 , էջ 46-51
6) Հակոբյան Գ. Հ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Երևան: Արտագրես, 2011
7) Ասատրյան Զ., Տարրական կրթության մանկավարժություն, ուսումնամեթոդական ձեռնարկ (դասախոսությունների ժողովածու), Եր., «Տիգրան Մեծ», 2017. – 160 էջ:
8) Սիմոնյան Ց.Ռ., Հայմանկավարժականմտքիպատմություն, Երևան, 2004:
9) Землянская Е. Н., Теория и методика воспитания школьников: учебник и практикум для СПО. М., издательство Юрайт, 2019. – 57 с.
10) Педагогика начального образования / Под ред. С. С. Котовой. Учебник для вузов. СПб.: Питер, 2017. ил. – (Серия «Учебник для вузов»).
11) Глумова С. Н., Дидактическая игра как средство развития познавательного интереса младших школьников на уроках математики, Белгород, Вейделевка 2012, 22 с.
12) Гуревич А. М. Ролевые игры и кейсы в бизнесс-тренингах. СПб., 2004 , 453с.
13) Дидактические и развивающие игры в начальной школе. Методическое

пособие с электронным приложением (Сост. Е. С. Галажина), М., Планета, 2011г.

14) Новосёлова С. Л., “ Игра дошкольника”. – М., 1989, 286 с.

15) Селевко Г. К. Современные образовательные технологии. Учебное пособие.

16) Москва: Народное образование, 1998, 256 с.

17) Шепель В. М., Производство и педагогика – ред., Москва, 1969, 112 с.

Համացանցային կայքեր

1. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%AB%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
2. http://www.usum.org/load/49-1-0-736
3. https://studbooks.net/32067/pedagogika/tsel_vospitaniya
4. http://www.ysu.am/files/1-1511355539-.pdf
5. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/mxitargosh/2019(1).pdf